ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 716 - Ա

«ԷԿՈ-ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ, ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ, ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Էկո-երիտասարդություն» երիտասարդական, բնապահպանական, զբոսաշրջային հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ 3,453,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Տաթև համայնքի մանկապարտեզների խաղահրապարակների բարելավում» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Էկո-երիտասարդություն» երիտասարդական, բնապահպանական, զբոսաշրջային հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 09217536) «Մագնոն Ա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 05554853) 2024 թվականի սեպտեմբերի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մանկական խաղահրապարակի սարքավորումների պատրաստման, տեղափոխման և տեղադրման

աշխատանքների իրականացում՝ 3,453,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն:

3. «Էկո-երիտասարդություն» երիտասարդական, բնապահպանական, զբոսաշրջային հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել ամփոփ տեղեկություններ՝ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

15.10.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ